# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ – ԾՐԱԳԻՐ

2022-2023 ուսումնական տարի

Զանգակատան միջնակարգ դպրոց

Մեթոդմիավորման կազմի կրթական և աշխատանքային տվյալների մասին աղյուսակ

| Ազգանունը,անունը, հայրանունը | Ծննդ. թիվ | Կրթությունը | Որակավորումը | Ստաժը | Ի՞նչ առարկա է դասավանդում | Դասավանդվող դասարանները | Շաբաթվա ժամերը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սահակյան Ռուզաննա Հայկի | 1975 | բարձրագույն | Մանկավարժ,դասվար | 13 | Մայրենի, Մաթեմատիկա, Տեխնոլոգիա,Երաժշտություն | 1-ին | 15 |
| Մարտիրոսյան Հասմիկ Հենրիկի | 1976 | բարձրագույն | Մանկավարժ,դասվար | 16 | Մայրենի, Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը, Երաժշտություն,Տեխնոլոգիա | 2-րդ | 17 |
| Հայրապետյան Աստղիկ Արմենի | 1989 | բարձրագույն | Մանկավարժ,դասվար | 4 | Մայրենի, Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը, Տեխնոլոգիա, Երաժշտությու | 3-րդ | 17 |
| Հայրապետյան Շուշանիկ Գարեգինի | 1960 | բարձրագույն | Մանկավարժ,դասվար | 43 | Մայրենի,Մաթեմատիկա,Ես և շրջակա աշխարհը,Տեխնոլոգիա,Երաժշտություն | 4-րդ | 18 |

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽՈՐԴ «2021-2022» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Դասվարական» մ/մ-ը 2021-2022 ուստարում աշխատել է 4 հոգանոց խմբով:Խմբի ներսում աշխատանքներն իրականացվել են համակարգված, ըստ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան-ծրագրի:Կատարվել է

աշխատանքի բաժանում՝ հաշվի առնելով մ/մ անդամների կարողություններն ու ընդունակությունները:

2021-2022 ուստարում աշխատել, համագործակցել և գտել ենք արդյունավետ ուղիներ ուսուցման որակը բարձրացնելու ուղղությամբ: Տարեսկզբին միասնական աշխատանքի շնորհիվ կազմվել են առարկայական թեմատիկ պլանավորումներ չափորոշչային պահանջներին համապատասխան, ,որոնք ստուգվել և հաստատվել են:

Տարվա ընթացքում իրականացվել են փոխադարձ դասալսումներ ,քննարկվել են մեթոդական բազմապիսի հարցեր,կազմակերպվել են դաս-միջոցառումներ,բաց դասեր, մանկավարժական զեկուցումներ,սեմինարներ:

*Մ/Մ կողմից դրված նպատակներ և խնդիրներ ուստարվա ընթացքում*

- Ստեղծվել են պայմաններ կրթության որակի բարձրացման ուղղությամբ:
- Կատարվել են կրթամեթոդական և գործնական աշխատանքների արդյունքների վերլու-ծություններ :
- Առաջավոր փորձի ձեռքբերում- մեթոդական մշակումներ և մանկավարժական ընթերցումներ են կազմակերպվել :
- Գնահատումն իրականացվել է գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ մեթոդական ցուցումների համաձայն :

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԿՈՂՄԻՑ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

I. Տեղեկատվական- վերլուծական գործունեություն

1.Կազմել և քննարկել մեթոդմիավորման երկու կիսամյակի աշխատանքային պլանները:
2.Կատարել համադպրոցական ուսումնական պլանի պետական պարտադիր, դպրոցական, նախասիրական ժամաքանակների բաշխում:
3.Իրականացնել չափորոշիչների, առարկայական ծրագրերի հիման վրա կազմված առարկայական թեմատիկ պլանների ստուգումն ու հաստատումը :
4. Կազմակերպել և արձանագրել փոխադարձ դասալսումները:
5. Կանոնակարգել առաջին դասարանցիների, տարրական բոլոր դասարանների անձնական գործերը:
6. Ուսուցիչներին տալ մեթոդական օժանդակություն դասղեկների աշխատանքային պլանների կազմման և ուսուցչի թղթապանակների վարման վերաբերյալ:
7.Կիսամյակների ընթացքում կազմակերպել և սահմանված կարգով արձանագրել մեթոդական միավորման նիստերը :
8. Կազմել երկու կիսամյակի աշխատանքների հաշվետվությունները :

*I. Ուսումնադաստիարակչական գործունեություն* - Մեթոդական միավորման անդամներն իրենց աշխատանքում կկիրառեն ուսուցման նոր մեթոդներ՝ դասերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
2. Կկազմակերպվեն բաց դասեր:
3.Կկազմակերպվեն նպատակային էքսկուրսիաներ, միջոցառումներ :
4. Կիրականացվեն նախագծային աշխատանքներ:

*III Ուսումնամեթոդական գործունեություն*

1.Կիսամյակների ընթացքում դասվարները կկազմեն տարաբնույթ հայտորոշիչ, ստուգիչ թեմատիկ թեստեր, քարտեր: Կկազմվեն գրավոր աշխատանքների տարբերակներ տնօրինության կողմից ստուգումներ կատարելու նպատակով:
2. Կկազմվեն և կներկայացվեն բաց դասերի օրինակելի դասապլաններ:
3. Կներկայացվեն մանկավարժական ընթերցումներ:
4. Կիրակա նացվեն վարպետության դասեր:

| N | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատուներ |
|---|---|---|---|
| 1. | 1.Տարրական դասարանների ուսուցիչների մ/մ 2022-2023 թվականների ուսարվա պլանի քննարկում և հաստատում:<br>2.Պետական և դպրոցական բաղադրիչների ժամաքանակի բաշխման վերաբերյալ առաջարկությունների քննարկում և հաստատում:<br>3 Թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների որոշում և հաստատում :<br>4 Չափորոշչային պահանջներին համապատասխան առարկայական թեմատիկ ծրագրերի քննարկում, հաստատում տնօրենի կողմից:<br>5.Ցուցումներ նորմատիվ փաստաթղթերի վարման վերաբերյալ: | Օգոստոս | Մ/մ նախագահ Ուսմասվար Մ/մ անդամներ |
| 2. | 1.Ուսուցիչների ինքնակրթության թեմատիկայի շտկում և հաստատում:<br>2.Ուսուցիչների թղթապանակները,դրանց կառուցվածքի վերաբերյալ ծագած հարցերի քննարկում:<br>3.Մուտքային գրավոր չորրորդ դասարանում մայրենիից :<br>4.Չհասցնող աշակերտների դժվարությունների ուսումնասիրում:<br>5.Մանկավարժական զեկուցումների,բաց դասերի,վարպետության դասերի,արտադասարանական միջոցառումների ժամանակացույցի կազմում: | Սեպտեմբեր | Մ/մ նախագահ Ուսմասվար Մ/մ անդամներ |
| 3. | 1.Մուտքային գրավոր աշխատանքներ երկրորդ և երրորդ դասարաններում մայրենիից :<br>2.Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման առանձնահատկությունները տարրական դասարաններում-քննարկումներ:<br>3.Մայրենիի դասերի կառուցվածքի,դասի տարբեր փուլերի փոխկապակցության ուսումնասիրում:<br>4.Մանկավարժական զեկուցում:<br>5.Միջոցառումներ Ուսուցչի օրվա տոնի առթիվ: | Հոկտեմբեր | Մ/մ նախագահ Ուսմասվար Մ/մ անդամներ |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | 1.Կարդալու կարողությունների ստուգում և արդյունքների վերլուծություն:<br>2.Վարպետության դաս <<Սովորողների կարդալու կարողությունների>> մշակման արդյունավետ ուղիների ներկայացում:<br>3.Հետևյալ առարկաների կամ գործընթացների դրվածքի ուսումնասիրում փոխադարձ դասալսումների միջոցով.<br>•Մաթեմատիկա-տարրական դասարաններում :<br>•Տառուսուցում- I դասարանում :<br>4. ՏՀՏ-ի կիրառմամբ դասերի դիտարկում : | Նոյեմբեր | Մ/մնախագ ահՈւսում ասվարՄ/մ անդամներ |
| 5. | Թեմատիկ գրավոր աշխատանքների և անցկացման գրաֆիկի կազմում :<br><br>1.Ուսման մեջ հետ մնացող աշակերտների հետ կատարված աշխատանքների վերլուծություն:<br>2.Սովորողների հետազոտական, նախագծային աշխատանքների կազմակերպման առ անձնահատկությունները : .Թեմատիկ գրավոր աշխատանքների անցկացում, ամփոփում և վերլուծություն ,<br>ուսումնասիրությունների արդյունքների քննարկում մ/մ նիստում :<br>3.Ուսուցիչների I կիսամյակի հաշվետվությունների ներկայացում, կատարած աշխատանքների վերլուծում, ամփոփում :<br>4.Փոխադարձ դասալսումներ :<br>5.Բաց դասեր :<br>6.Ծրագրի կատարողականի վերլուծություն :<br>Միջոցառումներ : | Դեկտեմբեր | Մ/մնախագ ահՈւսում ասվարՄ/մ անդամներ |
| 6. | 1. Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդի կիրառումը տարրական դասարաններում:<br>2. Մտածողության, ուշադրության, ինքնաստուգման համար առաջադրանքների ստեղծում:<br>3. Դասի ինքնավերլուծությունը՝ որպես ուսուցչի մասնագիտական վարպետության բարձրացման միջոց: | Հունվար | Մ/մնախագահ Ուսմասվար Մ/մանդամներ |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | 1. Աշակերտների տեքստային բանիմացության կարողության ձևավորումը <<հեղինակ-տեքստ-ընթերցող>>համատեքստում:<br>2. Մայրենի լեզվի դասերին աշակերտների ձեռք բերած գիտելիքների ունակությունների և հմտությունների ստուգման տեսակները:<br>3.Հուզական ներգործությունների դերը ուսուցչի մանկավարժական վարպետության ձևավորման գործընթացում: | Փետրվար | Մ/մնախագա հՈւսմասվար Մ/մանդամնե ր |
| 8. | 1. Ուսումնասիրում պլանավորված աշխատանքների արդյունքները հիմքում դնելով չափորոշչային պահանջների կատարողականը:<br>2. Երկրորդից չորրորդ դասարաններում Ես և շրջակա աշխարհը առարկայից առարկայական շաբաթի կազմակերպում :<br>3.Կանանց տոնին նվիրված միջոցառումների կազմակերպում:<br>4.Զեկուցում <<Կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացումը : | Մարտ | Մ/մ նախագահ Ուսմասվար Մ/մ անդամներ |
| 9. | 1. Վիրտուալ էքսկուրսիաներ, նպատակն է աճող սերնդին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանել բնության օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել բնությունը:<br>2.Հետազոտական աշխատանք երրորդ,չորրորդ դասարաններում << Գարնանային հեքիաթ>>:<br>3.Առարկայական շաբաթ Մաթեմատիկայից առաջինից չորրորդ դասարաններում: | Ապրիլ | Մ/մ նախագահ Ուսմասվար Մ/մ անդամներ |
| 10. | 1. Տարրական դասարաններում անցկացվող թեմատիկ գրավոր աշխատանքների համատեղ վերլուծություն :<br>2. Կազմակերպել կոնսուլտացիաներ մայրենի, մաթեմատիկա առարկաներից 4-րդ դասարանի սովորողներին տարեվերջյան ստուգարքին նախապատրաստելու համար:<br>3. Կազմել և հաստատել քննական թեստերը, հաշվի առնելով ԿԳՄՍ- ի կողմից ուղարկված նմուշները:<br>Ծանոթանացնել քննակարգին.<br>4.Էքսկուրսիաների կազմակերպում առաջինից չորրորդ դասարաններում: | Մայիս | Մ/մ նախագահ Ուսմասվար Մ/մ անդամներ |

| | | | |
|---|---|---|---|
| 11. | 1.Ստուգարք Մայրենիից:<br>2.Ստուգարք Մաթեմատիկայից:<br>3.Արդյունքների ամփոփում,քննարկում և գնահատում: | Հունիս | Մ/մ նախագահ Ռւսմասվա ր Մ/մ |